Ընտանեկան բռնությունը Հայաստանում

Գրետա Բաղդասարյանի գործը

AMNESTY INTERNATIONAL

Ես օրենքները չգիտեի. 18 տարեկանում հեռացա Երեւանից եւ 12 տարի գյուղում մեկուսացման մեջ ապրելուց հետո երբ Երեւան վերադարձա ապրելու, չգիտեի ում դիմել: Հարեւաններս տեսել էին իմ կապտուկները, բայց ո՞վ նրանց կլսի հիմա: Երբեք մտքովս չէր անցել ոստիկանության դիմել: Բացի այդ, կվախենայի բողոքելու հետեւանքներից: Հիմա ես ոչ ոքից չեմ վախենում. կորցնելու ոչինչ չունեմ... ուզում եմ բողոքել: Սակայն այժմ տարիներ են անցել: Սկզբում ոստիկանության չեմ դիմել, միայն բժշկի եմ գնացել: Ես վժռականորեն տրամադրված եմ [գործ հարուցել] *եւ ցանկանում եմ նրան արդարադատության ձեռքը հանձնել իր արածների համար: Սակայն կարող եմ արդյո՞ք հիմա ապացուցել, որ ինքն էր մեղսագործը: Վնասվածքների բժշկական վկայությունն ունեմ: Եթե կարողանամ ապացուցել, չեմ վարանի ...*

Գրետա Բաղդասարյան, հուլիս, 2008թ.

Մայրաքաղաք Երեւանում ծնված Գրետա Բաղդասարյանն իր ապագա ամուսնուն հանդիպել է 1986 թվականին: Իր խոսքերով 1989 թվականին ապագա ամուսինն իրեն բռնաբարեց, որից հետո նա հղացավ: Հղությունն ու երեխային գաղտնի պահելու համար, նա իրեն տարավ ծնողների տուն՝ Արագածոտնի մարզ, ուր եւ 1989 թվականին նրանք ի վերջո ամուսնացան:

Ծեծը, բռնաբարությունն ու այլ տեսակի ճնշումները Գրետայի ամուսնական կյանքի անբաժան մասը դարձան: Amnesty International-ին տված հարցազրույցի ընթացքում Գրետան հիշեց, թե ինչպես էր ամուսինն իրեն հղի վիճակում, «կովի պես» ճիպոտելով, ստիպում երկար տարածություններ առանց ջրի քայլել, որը եւ նրան վիժման պատճառը դարձավ: 2001 թվականին բահով դաժան ծեծի արդյունքում քթի կոտրվածք եւ ուղեղի ցնցում ստանալուց հետո Գրետան ի վերջո լքեց ամուսնուն: Հարեւանները նրան համոզեցին ոստիկանության չդիմել, եւ Գրետան վերադարձավ Երեւան՝ ծնողների տուն: Այստեղ նա բժշկի դիմեց, որը թեեւ արձանագրեց վնասվածքները, սակայն ոստիկանությանը դեպքի մասին զեկույց չներկայացրեց: Գրետան իր դաժան փորձությունների հետեւանքով հաշմանդամ է դարձել, որը նրան զրկել է ապրուստ վաստակելու համար աշխատելու հնարավորությունից:

Ինքնավստահություն ձեռք բերելով եւ տեղեկանալով իր իրավունքների մասին, Գրետան այլեւս չի ցանկանում լռել: Նա նաեւ ցանկանում է իր դեմ բռնություն գործադրողին արդարադատության ձեռքը հանձնել՝ չնայած իր փաստաբանի՝ «Ա. Դ. Սախարովի անվան Մարդու իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպության մասնագետի կարծիքով քրեական գործ հարուցելն անհնար է օրենքում սահմանափակումների վերաբերյալ դրույթների պատճառով: Գրետային հասցված վնասվածքները հաստատող արձանագրությունները, ըստ էության, դատական գործի քննության համար ընդունելի չեն:

Photo: Greta Baghdasaryan © Amnesty International

Գրետան եւ իր երեխաներն այլեւս իրենց տուն մուտք գործելու իրավունք չունեն, որն իրականում կառուցվել է Գրետայի հոր օգնությամբ, երբ դեռ ամուսնու հետ նույն հարկի տակ էին ապրում: 2002 թվականին ամուսնուց պաշտոնական ապահարզան ստանալուց հետո Գրետան պարզեց, որ իրենց բացակայության ընթացքում նախկին ամուսինն իր երկու որդիների անունները գրանցման տեղական մատյաններից հանել է: Գրանցում չունենալը հանգեցնում է որդիների մի շարք քաղաքացիական իրավունքների, այդ թվում՝ ընտրելու իրավունքի ոտնահարմանը, եւ նրանց զրկում կրթություն ստանալու, առողջապահական եւ սոցիալական պաշտպանությունից օգտվելու հնարավորությունից: Գույքի իր մասնաբաժինը ետ ստանալու եւ որդիներին գրանցման տեղական մատյաններում վերագրանցելու համար Գրետա Բաղդասարյանը նաեւ դատարան է դիմել: Ներյակացված երեք դիմումները մերժվել են Աշտարակի մարզային դատարանի կողմից: Գրետա Բաղդասարյանի կարծիքով իր նկատմամբ խտրական վերաբերմունք է ցուցաբերվել դատական բոլոր լսումների ժամանակ, քանզի տեղական ինքնակառավարման մարմիններում իր ամուսնու ընկերների եւ բարեկամների համար ինքն «օտար» էր:

Amnesty International-ն անհանգստացած է ընտանեկան եւ սեռական ակնհայտ բռնության զոհ դարձած Գրետա Բաղդասարյանի նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսեւորմամբ եւ նրա գործի արդար դատավարության բացակայությամբ: Amnesty International-ը կոչ է անում Հայաստանի իշխանական համապատասխան մարմիններին քննության առնել վերջինիս գործը եւ ապահովել նրան լիակատար վերականգնողական ծառայությունների, այդ թվում՝ փոխհատուցման եւ սոցիալ-հոգեբանական եւ բժշկական օգնության տրամադրումը:

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՍ ՕԳՏԱԿԱՐ ԼԻՆԵԼ:

Նամակներ գրի՛ր Հայաստանի համապատասխան մարմիններին՝ արտահայտելով.

- Մտահոգությունդ ընտանեկան եւ սեռական բռնության զոհ դարձած Գրետա Բաղդասարյանի ամուսնական գույքի բաժանմանը վերաբերող գործի քննության ընթացքում ակնհայտ խտրական վերաբերմունքի դրսեւորման եւ այդ գործի արդար դատավարության բացակայության համար, որի արդյունքում Գրետան կորցրել է օրենքով իրեն հասնող բնակարանային պահանջը, ինչպես նաեւ իր եւ իր երեխաների գույքի իրավունքը: Պահանջի՛ր գործի հետաքննություն:
- Մտահոգությունդ Գրետա Բաղդասարյանի անաշխատունակությանը հանգեցրած հաշմանդամության վերաբերյալ, որն ըստ էության իր դեմ բռնություն գործադրողի հասցրած վնասվածքների արդյունք է, պահանջելով իշխանություններից Գրետային եւ իր երեխաներին անհապաղ սոցիալական օժանդակություն տրամադրել ու ապահովել բնակարանով:
- Պահանջդ իշխանություններին՝ ապահովելու Գրետա Բաղդասարյանին եւ բռնության զոհ դարձած բոլոր կանանց լիակատար վերականգնողական ծառայությունների, այդ թվում՝ փոխհատուցման, հոգեբանական եւ սոցիալական, բժշկական օգնության տրամադրումը՝ համաձայն Կանանց դեմ խտրականության վերացման կոմիտեի Ընդհանուր առաջարկությունների 19-րդ եւ Եվրոպայի խորհրդի Նախարարների հանձնաժողովի կողմից ներկայացված Առաջարկությունների փաթեթի 5-րդ (2002թ.) կետերի:
- Պահանջդ իշխանություններին՝ ամբողջությամբ վերականգնելու Գրետա Բաղդասարյանի երեխաների քաղաքացիական իրավունքներն, այդ թվում՝ ընտրելու իրավունքը՝ վերջիններիս անունները վերագրանցելով տեղական մատյաններում:
- Մտահոգությունդ առ այն, որ հազարավոր կանայք Հայաստանում ենթարկվում են բռնության իրենց իսկ ընտանիքներում, որը նրանց՝ մարդու իրավունքների կոպիտ խախտում է:
- Պահանջդ իշխանություններին՝ կարեւորելու ընտանեկան բռնության վերացումը եւ Կանանց դեմ խտրականության բոլոր ձեւերի վերացման ՄԱԿ-ի կոնվենցիայով Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարումը:

Խնդրում ենք դիմումները հասցեագրել՝

1) Վարչապետ Տիգրան Սարգսյանին՝ ՀՀ, 0010, Երեւան, Հանրապետության հրապարակ, Կառավարության շենք 1

2) Դատախազ Աղվան Հովսեփյանին՝ ՀՀ, 0010, Երեւան, Վ. Սարգսյան 5

Կրկնօրինակները՝

1) Գյուղապետ Հրաչ Ավագյանին՝ ՀՀ, Արագածոտնի մարզ, գյուղ Բյուրական

2) Մարզպետ (մարզային ադմինիստացիայի ղեկավար) Գ. Գյոգալյանին՝ ՀՀ, Արագածոտնի մարզ